Մտապահե՛ք այս կարևոր փաստերը

- Դուք պետք է ունենաք Medicare-ի մաս Ա (Հիվանդանոցային ապահովագրություն) և Medicare-ի մաս Բ (Բժշկական ապահովագրություն) Medigap-ի ապահովագրական վկայագիր գնելու համար:
- Ձեր Medigap-ի ապահովագրական վկայագրի համար Դուք, բացի Medicare-ին վճարվող Մաս Բ-ի ապահովագրավճարից, մասնավոր ապահովագրական ընկերությանը նույնպես վճարում եք առանձին ապահովագրավճար: Կապ հաստատեք ապահովագրական ընկերության հետ՝ պարզելու, թե ինչպես կարող եք վճարել ձեր Medigap-ի ապահովագրավճարը:
- Medigap-ի ապահովագրական վկայագիրն հատուցում է միայն մեկ անձի: Ամուսինները պետք է գնեն առանձին ապահովագրական վկայագրեր:
- Թեև նախկինում վաճառված Medigap-ի որոշ ապահովագրական վկայագրեր ծածկում էին նաև դեղատոմսով դուրսգրվող դեղեր, 2006 թվականի հունվարի 1-ից հետո վաճառված ապահովագրական վկայագրերի դեպքում նման ապահովագրական ծածկույթը չի թույլատրվում: Եթե Դուք ցանկանում եք ունենալ դեղատոմսով դուրսգրվող դեղերի ապահովագրական ծածկույթ, Դուք կարող եք միանալ Medicare-կողմից հաստատված մասնավոր ընկերությունների կողմից առաջարկվող՝ Medicare-ի դեղատոմսով դուրսգրվող դեղերի պլանին (Մաս Դ):
- Medigap-ի ապահովագրական վկայագրերի համեմատումը կարևոր է, քանի որ գները կարող են տարբեր լինել, և ապահովագրավճարները կարող են բարձրանալ Ձեր տարիքին զուգահեռ: Որոշ նահանգներ սահմանափակումներ են դնում ապահովագրական ընկերությունների առաջարկած «գների» առնչությամբ կամ սահմանում են Medigap-ի ապահովագրավճարներ:
- Medigap-ի ապահովագրական վկայագիր գնելու լավագույն ժամանակը Ձեզ համար նախատեսված Medigap-ում ընդգրկվելու բաց ժամանակաշրջանն է, երբ Դուք իրավունք ունեք գնելու Ձեր նահանգում առաջարկվող Medigap-ի ցանկացած ապահովագրական վկայագիր: Այս վեցամսյա ժամանակաշրջանը մեկնարկում է այն ամսվա առաջին օրը, երբ լրանում է Ձեր 65 տարեկանը կամ ավելին, **և** Դուք ընդգրկվում եք Մաս Բ-ում: Որոշ նահանգներ պահանջում են, որպեսզի Medigap-ի ապահովագրական ընկերությունները Medigap-ի ապահովագրական վկայագրեր վաճառեն 65 տարեկանը չլրացած անձանց: Դիմեք Ձեր Ապահովագրական հարցերով նահանգային վարչությանը և պարզեք, թե ինչ իրավունքներ ունեք Դուք՝ համաձայն նահանգային իրավունքի:

Որտեղի՞ց կարող եմ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ:

- Այցելեք Medicare.gov/publications կայքէջ՝ դիտելու կամ տպելու «Medigap-ի ապահովագրական վկայագիրի ընտրությունը. բժշկական ապահովագրության վերաբերյալ ուղեցույց Medicare ծրագրում ընդգրկված անձանց համար» հրապարակումը:
- Այցելեք Medicare.gov/find-a-plan/questions/Medigap-home.aspx կայքէջ Medigap-ի ապահովագրական վկայագրեր գտնելու և համեմատելու համար:
- Զանգահարեք 1-800-Medicare (1-800-633-4227) հեռախոսահամարով՝ Medicare և Medigap ծրագրերին առնչվող հարցերի վերաբերյալ օգնություն ստանալու համար: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:
- Զանգահարեք Ձեր Ապահովագրական հարցերով նահանգային վարչություն, եթե Դուք հարցեր ունեք Ձեր տարածաշրջանում վաճառվող Medigap-ի ապահովագրական վկայագրերի կամ ապահովագրությանը վերաբերող ցանկացած խնդրի վերաբերյալ: Հեռախոսահամարն իմանալու համար այցելեք Medicare.gov/contacts կայքէջը կամ զանգահարեք 1-800-MEDICARE հեռախոսահամարով:
- Զանգահարեք Առողջության ապահովագրության հարցերով աջակցության նահանգային ծրագիր (SHIP)՝ հետևյալ հարցերից ցանկացածի վերաբերյալ օգնություն ստանալու համար
  - Medigap-ի ապահովագրական վկայագրի կամ երկարաժամկետ խնամքի ապահովագրության գնում
  - Վճարումների հետ կապված մերժումներ կամ բողոքներ
  - Medicare-ի հետ կապված իրավունքներ և պաշտպանություն
  - Medicare-ի պլանի ընտրություն
  - Ձեր Medigap-ի ապահովագրական վկայագիրը դադարեցնելու կամ չդադարեցնելու մասին որոշման կայացում
  - Medicare-ի պահանջագրերի մասին հարցեր
- Հեռախոսահամարն իմանալու համար այցելեք shiptacenter.org կայքէջ կամ զանգահարեթլ 1-800-Medicare հեռախոսահամարով:

Վճարված է Առողջապահության և սոցիալական ծառայությունների դեպարտամենտի կողմից:

«Medicare-ի լրացուցիչ ապահովագրություն. ինչպես սկսել» իրավական փաստաթուղթ չէ: Առավել մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել «Medigap-ի ապահովագրական վկայագրի ընտրությունը. առողջության ապահովագրության վերաբերյալ ուղեցույց Medicare ծրագրում ընդգրկված անձանց համար» գրքույկում և Medicare.gov կայքում: Medicare ծրագրի պաշտոնական իրավական ուղեցույց ներառված է համապատասխան օրենքներում, կանոնակարգերում և որոշումներում:

Այդ գրքույկում առկա տեղեկությունները ճիշտ են, երբ տպված են: Այցելեք Medicare.gov կայքէջ կամ զանգահարեք 1-800-Medicare (1-800-633-4227) հեռախոսահամարով ամենաթարմ տեղեկություններն ստանալու համար: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:

CMS Product No. 11575-Armenian
Revised May 2019

Medicare-ի լրացուցիչ ապահովագրություն

ԻՆՉՊԵՍ ՍԿՍԵԼ

Medicare-ի լրացուցիչ (Medigap) ապահովագրական վկայագրերի համառոտ նկարագրությունը

CENTERS FOR MEDICARE & MEDICAID SERVICES

Եկեք սկսենք

Medicare-ի հիմական ծրագիրը վճարում է բազմաթիվ, սակայն ոչ բոլոր առողջապահական ծառայությունների և պարագաների համար: Medicare-ի լրացուցիչ ապահովագրական վկայագրերը, որոնք վաճառվում են մասնավոր ընկերությունների կողմից, կարող են օգնել Ձեզ վճարել մի շարք առողջապահական ծախսերի այն մասնաբաժինը, օրինակ՝ համավճարները, համապահովագրությունը և չհատուցվող գումարը, որը Medicare-ի հիմական ծրագիրը չի հատուցում: Medicare-ի լրացուցիչ ապահովագրական վկայագրերը նաև կոչվում են Medigap ապահովագրական վկայագրեր:

Medigap-ի որոշ ապահովագրական վկայագրեր ապահովագրական ծածկույթ են առաջարկում նաև այնպիսի ծառայությունների համար, օրինակ՝ առողջապահական ծառայություն ԱՄՆ-ից դուրս ճամփորդելու ժամանակ, որոնք Medicare-ի հիմական ծրագիրը չի հատուցում: Եթե Դուք ընդգրկված եք Medicare-ի հիմական ծրագրում և գնում եք Medigap-ի ապահովագրական վկայագիր, ապա Medicare-ը կվճարի հատուցվող առողջապահական ծախսերի համար Medicare-ի կողմից հաստատված գումարը: Այնուհետև, Ձեր Medigap-ի ապահովագրական վկայագիրը վճարում է իր մասնաբաժինը: Դուք եք վճարում Medigap ապահովագրական վկայագրի համար ապահովագրավճարները:

Medigap ապահովագրական վկայագիրը տարբերվում է Medicare Advantage Plan-ից (ինչպես HMO կամ PPO): Medicare Advantage Plan-ները իրենցից ներկայացնում են ձեր Medicare-ի նպաստները ստանալու եղանակներ, մինչդեռ Medigap-ի ապահովագրական վկայագիրը լրացնում է ձեր Հիմական Medicare-ի նպաստները: Ընդհանրապես անօրինական է, երբ ապահովագրական ընկերությունը Medigap-ի ապահովագրական վկայագիր է վաճառում Medicare-ի արտոնյալ պլանում ընդգրկված՝ որևէ անձի: Եթե Դուք ունեք Medigap և փոխարինում եք այն Medicare-ի արտոնյալ պլանով առաջին անգամ, Դուք իրավունք ունեք մտափոխվելու և Դաշնային իրավունքով Դուք կունենաք Medigap-ի ապահովագրական վկայագիր գնելու հատուկ իրավունքներ, եթե Medicare-ի արտոնյալ պլանում ընդգրկվելուց հետո 12 ամսվա ընթացքում կրկին ընդգրկվեք Medicare-ի հիմական ծրագրում:

Ի՞նչ ապահովագրական վկայագրեր գոյություն ունեն:

Medigap-ի յուրաքանչյուր ապահովագրական վկայագիր պետք է համապատասխանի Ձեզ պաշտպանող դաշնային և նահանգային օրենքներին, և ապահովագրական վկայագիրը պետք է պարզորոշ կերպով սահմանված լինի որպես «Medicare-ի լրացուցիչ ապահովագրություն»: Ապահովագրական ընկերությունները կարող են վաճառել Ձեզ միայն «ստանդարտներին համապատասխանեցված» Medigap-ի ապահովագրական վկայագրեր, որոնք նահանգներից մեծ մասում նախանշված են A-N տառերով: Մասաչուսեթսում, Մինեսոտայում և Վիսկոնսինում Medigap-ի ապահովագրական վկայագրերը համապատասխանեցված են այլ ստանդարտների: Առավել մանրամասն տեղեկությունների համար այցելեք Medicare.gov կայքէջ:

Ստանդարտներին համապատասխանեցված բոլոր ապահովագրական վկայագրերն առաջարկում են մինիմում հիմական արտոնությունները՝ անկախ այն հանգամանքից, թե որ ապահովագրական ընկերությունն է այն վաճառում, սակայն որոշ ընկերություններ առաջարկում են նաև լրացուցիչ արտոնություններ. ուստի, Դուք կարող եք ընտրել այն, որը համապատասխանում է Ձեր կարիքներին:

E, H, I, և J պլաններն այլևս վաճառքի ենթակա չեն, **սակայն** եթե Դուք ունեք այդ ապահովագրական վկայագիրներից որևէ մեկը, Դուք սովորաբար կարող եք պահպանել դա: Առավել մանրամասն տեղեկությունների համար կապ հաստատեք Ձեր ապահովագրական ընկերության հետ:

Որոշ նահանգներում Դուք կարող եք գնել Medigap-ի ապահովագրական վկայագրի մեկ այլ տեսակ, որը կոչվում է Medicare SELECT: Medicare SELECT պլանները ստանդարտներին համապատասխանեցված Medigap-ի ապահովագրական վկայագրեր են, որոնք պահանջում են, որպեսզի Դուք օգտվեք կոնկրետ հիվանդանոցներից, իսկ, որոշ դեպքերում նաև կոնկրետ բժիշկների կամ առողջապահական ծառայություններ մատուցողների ծառայություններից ամբողջական լրացուցիչ ապահովագրական ծածկույթ ստանալու համար (բացառությամբ արտակարգ իրավիճակների): Եթե Դուք ունեք Medigap և փոխարինում եք այն Medicare SELECT-ի ապահովագրական վկայագրով, ապա Դաշնային իրավունքով Դուք իրավունք ունեք մտափոխվելու 12 ամիսների ընթացքում և փոխարինելու այն Medigap-ի ստանդարտ ապահովագրական վկայագրով:

Սկսած 2020 թվականի հունվարի 1-ից այն Medigap ծրագրերը, որոնք ծածկում են Մաս Բ-ի նվազեցվող գումարը (Ծրագրեր Գ և Զ) հասանելի չեն լինի Medicare-ում նոր ընդգրկված մարդկանց համար: Եթե ունեք այդ պլաններից որևէ մեկը (կամ Plan F-ի նվազեցվող գումարների մեծ քանակով տարբերակ) դուք կարող եք այն պահպանել: Եթե պայմանուսկ եք եղել Medicare-ի համար նախքան 2020 թվականի հունվարի 1-ը, սակայն դեռևս չեք ընդգրկվել, դուք կարող եք գնել այս պլաններից որևէ մեկը՝ Մաս Բ-ի չհատուցվող գումարի հատուցմամբ:

Ի՞նչի համար է հատուցվում:

Ստորև ներկայացված աղյուսակը պարունակում է Medigap-ի ապահովագրական վկայագրերով հատուցվող տարբեր արտոնությունների մասին հիմական տեղեկություններ: Եթե առկա է տոկոսային նշում, ապա Medigap-ի պլանը հատուցում է տվյալ արտոնության համար նշված տոկոսի չափով, և Դուք պարտավոր եք վճարել մնացած գումարը: Այցելեք Medicare.gov/supplements-other-insurance/how-to-compare-medigap-policies կայքը՝ այս տեղեկությունները առցանց տեսնելու համար:

	Medicare-ի լրացուցիչ ապահովագրական պլանները (Medigap)									
Արտոնություններ	A	B	C	D	F*	G	K	L	M	N
Մաս Ա-ի համապահովագրություն և հիվանդանոցային ծախսեր (Medicare-ի արտոնությունները սպառելուց հետո մինչև 365 լրացուցիչ օր)	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%	100%
Մաս Բ-ի համապահովագրություն կամ համավճար	100%	100%	100%	100%	100%	100%	50%	75%	100%	100%* *
Արյուն (առաջին 3 պինտան)	100%	100%	100%	100%	100%	100%	50%	75%	100%	100%
Մաս Ա-ի ծանր հիվանդների խնամքի համար համապահովագրություն կամ համավճար	100%	100%	100%	100%	100%	100%	50%	75%	100%	100%
Որակավորված բուժքույրական հաստատություններում խնամքի համար համապահովագրություն			100%	100%	100%	100%	50%	75%	100%	100%
Մաս Ա-ի չհատուցվող գումար		100%	100%	100%	100%	100%	50%	75%	50%	100%
Մաս Բ-ի չհատուցվող գումար			100%		100%					
Մաս Բ-ի լրացուցիչ գանձումներ					100%	100%				
Արտերկիր ճամփորդության ժամանակ արտակարգ պատահար (պլանի սահմաններում)			80%	80%	80%	80%			80%	80%
Գրպանից վճարվող գումարը (2019)****							$5,560	$2,780		

Ստանդարտներին համապատասխանեցված Medigap ապահովագրական վկայագրերը պարտադիր չէ, որ հատուցեն երկարաժամկետ խնամքը (ինչպես օրինակ խնամքը տարեցների խնամքի հաստատությունում), տեսողության հետ կապված կամ ատամաբուժական ծառայությունները, լսողական սարքերը, ակնոցները և մասնավոր խնամքը:

* Որոշ նահանգներում պլան F-ը որոշ ապահովագրական ծառայություններ տրամադրողների կողմից նույնպես առաջարկվում է որպես բարձր չհատուցվող գումարի պլան: Եթե Դուք ընտրեք այս տարբերակը, ապա Դուք պետք է 2019 թվականին վճարեք Medicare-ի կողմից հատուցվող ծախսերի (համապահովագրություն, համավճարներ, չհատուցվող գումարներ) դիմաց 2,300 դոլար կազմող չհատուցվող գումարը նախքան Ձեր ապահովագրական վկայագիրը կվճարի որևէ գումար:

** Պլան N-ը վճարում է Մաս Բ-ի համապահովագրության 100 տոկոսը՝ բացառությամբ բժշկի գրասենյակ որոշ այցելությունների համար մինչև 20 դոլար համավճարից և շտապ օգնության հիվանդասենյակի համար մինչև 50 դոլար համավճարից, եթե դրա արդյունքում ստացիոնար բուժման նպատակով ընդունելություն չի կատարվում:

*** K և L պլանների դեպքում, երբ Դուք հատուցում եք Ձեր գրպանից վճարվող տարեկան գումարը և Մաս Բ-ի համար Ձեր տարեկան չհատուցվող գումարը (185 դոլար 2019 թվականի համար), Medigap-ը 100 տոկոսով հատուցում է ապահովագրությամբ հատուցվող ծառայությունների դիմաց օրացուցային տարվա մնացած ամիսների ընթացքում:

1-800-MEDICARE

Medicare.gov